

**«2022Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ
ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼ**

«2022թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 13-րդ պարբերաշրջանի ընտրական 3-րդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են մեկական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Խնդրի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 20 միավոր:

Երբ որ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երբ որ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2022թ. նոյեմբերի 6-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2022թ. նոյեմբերի 7-ին:

ՈՒՇԱՂՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2023 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

**«2022Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ
13-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼԻ**

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր Ը Ե Վ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր Ը

Հարց 1. Եթե ԱԱՀ վճարող կազմակերպությունն իրեն պատկանող անշարժ գույքը անհատույց տրամադրել է իր հիմնադրին, ի՞նչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ նշված գործարքից: Նշենք նաև, որ այդ գույքը տվյալ հիմնադրի կողմից հանդիսացել է կանոնադրական կապիտալում ավելացում:

Ապրանքի մատակարարում է համարվում ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց:

ԱԱՀ-ով հարկման օբյեկտ՝ պրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը:

Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով՝

1) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի (այսուհետ սույն մասում՝ շենք) օտարումից եկամուտը հաշվարկվում է դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսից (այսուհետ սույն կետում՝ կադաստրային արժեք) ոչ պակաս չափով:

Հարց 2. Կազմակերպության հիմնադիրը որոշում է իրեն պատկանող կազմակերպության 100 տոկոս բաժնեմասը իրացնել անվանական արժեքով՝ 100 000 ՀՀ դրամ, սակայն հաշվապահը պնդում է, որ տվյալ գործարքից կառաջանա 20 000 000 ՀՀ դրամ հարկ: Ո՞ր դեպքում կարող է նման հարկային պարտավորություն առաջանալ:

Եկամտային հարկով նվազեցվող եկամուտ չի համարվում եթե ստացվում են կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը) ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում:

Հարց 3. Կազմակերպությունը հանդիսանում է ԱԱՀ վճարող առևտրով զբաղվող կազմակերպություն: Կազմակերպությունում իրականացվում է բյուջեի համալիր հարկային ստուգում, ստուգման ընթացքում պարզվում է, որ կազմակերպությունը կատարել է շուկայից գնում միակողմանի գնման ակտով 25 միլիոն դրամ, որի մասով առաջադրվում է եկամտային հարկի գծով հարկային պարտավորություն, որի մասով կազմակերպությունն առարկում է և դատարանը կայացնում է վճիռ ի օգուտ տնտեսվարողի: Նկարագրեք, որ դեպքում կարող է նման իրավիճակ առաջանալ:

Համաձայն 01.01.2015թ.-ից ուժի մեջ մտած ՀՕ-156-Ն-ի 3-րդ հոդվածի 4-րդ մասի ցանկում ներառված սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունների կիրառությունը նշանակում է, որ՝ կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են ցանկում ներառված սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեության մասով Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի:

Հարց 4. Համաձայն ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտի, հետաձգված հարկային պարտավորություն ճանաչվում է՝

- ա) հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով (այսինքն՝ այն ժամանակավոր տարբերությունները, որոնք ապագա ժամանակաշրջանների հարկվող շահույթը որոշելիս հանգեցնում են հարկվող գումարների առաջացման)
- բ) նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների գծով (այսինքն՝ այն ժամանակավոր տարբերությունները, որոնք ապագա ժամանակաշրջանների հարկվող շահույթը որոշելիս հանգեցնում են նվազեցնող (հանվող) գումարների առաջացման)

- զ) չօգտագործված հարկային վնասների գծով
- դ) չօգտագործված հարկային զեղչերի գծով:

Հարց 5. Համաձայն ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտի, արտերկրյա գործակալի ֆինանսական հաշվետվությունները՝

- ա) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն
- բ) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ արտարժույթի փոխարժեքային տարբերությունները էական են
- գ) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ արտերկրյա գործակալը դասակարգվում է որպես արտերկրյա միավոր
- դ) պետք է վերահաշվարկվեն այնպես, ինչպես եթե արտերկրյա գործակալի գործարքները հանդիսանային հաշվետու կազմակերպության գործարքներ:

Հարց 6. Համաձայն ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտի, արտերկրյա միավորի ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման նշված ընթացակարգերից որն է սխալ (ենթադրվում է, որ այն երկրի տնտեսությունը, որտեղ հիմնված է կամ ծավալվում է արտերկրյա միավորի գործունեությունը, գերադաճային չէ)՝

- ա) արտերկրյա միավորի դրամային ակտիվներն ու պարտավորությունները պետք է վերահաշվարկվեն փակման փոխարժեքով
- բ) արտերկրյա միավորի ոչ դրամային ակտիվներն ու պարտավորությունները պետք է վերահաշվարկվեն փակման փոխարժեքով
- գ) արտերկրյա միավորի եկամտի և ծախսի հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության օրվա փոխանակման փոխարժեքով
- դ) առաջացող բոլոր փոխարժեքային տարբերությունները պետք է հաշվետու կազմակերպության (համախմբված) ֆինանսական արդյունքները մասին հաշվետվությունում ձանաչվեն որպես եկամուտ կամ ծախս:

Հարց 7. Համաձայն ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտի, արտերկրյա միավորի ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման արդյունքում առաջացած և ուղղակիորեն սեփական կապիտալում ձանաչված փոխարժեքային տարբերությունները հետագայում պետք է՝

- ա) հավասարաչափ հաշվեգրվեն չբաշխված շահույթին
- բ) արտերկրյա միավորում զուտ ներդրման օտարման ժամանակ վերագրվեն չբաշխված շահույթին
- գ) հաշվեգրվեն չբաշխված շահույթին արտերկրյա միավորում զուտ ներդրման օտարման ժամանակ կամ հավասարաչափ՝ կախված կազմակերպության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան
- դ) պետք է ձանաչվեն որպես եկամուտ կամ ծախս նույն ժամանակաշրջանում, որի ընթացքում ձանաչվում են արտերկրյա միավորի օտարումից առաջացած շահույթն ու վնասը:

Հարց 8. Ղուստր ընկերության կանոնադրական կապիտալում նյութերի ներդրման արտացոլում (ներդրողի տեսանկյունից).

- ա) Ղեբետ 141
Կրեդիտ 211
- բ) Ղեբետ 141
Կրեդիտ 311
- գ) Ղեբետ 141
Կրեդիտ 614

Հրաց 9. Հիմնական միջոցների ֆինանսական վարձակալության հանձնում (վարձատուի մոտ).

- ա) Ղեբետ 146
Կրեդիտ 119
- բ) Ղեբետ 146
Կրեդիտ 627
- գ) Ղեբետ 146
Կրեդիտ 111

Հարց 10. Կազմակերպության կողմից տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում.

- ա) Ղեբետ 342
Կրեդիտ 147
- բ) Ղեբետ 145
Կրեդիտ 147
- գ) Ղեբետ 147
Կրեդիտ 145

Խ Ն Դ Ի Ր

Կազմակերպությունը 2021թ.-ին կատարել է հետևյալ գործարքները.

Եկամուտներ

<i>Հ/Հ</i>	<i>Անվանում</i>	<i>Գումար</i>	
1	Ապրանքների իրացումից եկամուտներ	45 000 000	45 000 000
2	Ծառայությունների մատուցումից եկամուտներ	12 000 000	12 000 000
3	Արտադրանքի իրացումից եկամուտներ	15 000 000	15 000 000
4	Անհատույց ստացված հողամաս	80 000 000	8 000 000
5	Գույքագրմամբ հայտնաբերված ավելցուկ	2 000 000	2 000 000
6	Ներված կրեդիտռական պարտքեր	10 000 000	10 000 000
	<i>Ընդամենը</i>	<i>164 000 000</i>	<i>92 000 000</i>

Ծախսեր

<i>Հ/Հ</i>	<i>Անվանում</i>	<i>Գումար</i>	<i>Գումար</i>
1	Իրացված ապրանքների ինքնարժեք	37 000 000	<i>35 000 000</i>
2	Վճարված աշխատավարձ	22 000 000	21 000 000
3	Հումքի գնում	8 500 000	8 500 000
4	Անհուսալի դեբիտորական պարտքեր	8 000 000	4 000 000
5	Մաշվածության գծով ծախս	15 000 000	15 000 000
	<i>Ընդամենը</i>	<i>90 500 000</i>	<i>68 500 000</i>

$$92\,000\,000 - 83\,500\,000 = 8\,500\,000$$

$$8\,500\,000 * 18\% = 1\,530\,000$$